Հրաչ Սեչինյանի ծննդյան **115-**ամյակը

Ի նշանավորումն բաթումահայ տաղանդավոր նկարիչ և կոմպոզիտոր Հրաչ Սեչինյանի ծննդյան 115 ամյակի, Աջարիայի հայ համայնքը, Բաթումի քաղաքապետարանի աջակցությամբ եւ արվեստագետի ազգականուհի Գուլր Փութկարաձե -

1 / 4

Հրաչ Սեչինյանի ծննդյան **115-**ամյակը

Սեչինյանի հետ համագործակցությամբ, ընթացիկ տարվա մարտի 7-ին Բաթումի «Բարեկամության տուն» համայնքների գրասենյակում կազմակերպեց ցերեկույթ, ուր ներկայացվեց Հրաչ Սեչինյանի արվեստը: Ցերեկույթի ընթացքում հնչեցին կատարումներ կոմպոզիտորի ստեղծագործություններից:

Հանդիսության մասնակիցները այցելեցին Հ. Սեչինյանի տուն, հարգանքի տուրք մատուցելով Հրաչ Սեչինյանի հուշատախտակի մոտ, որից հետո Բաթումի գերեզմանատանը

2 / 4

Հրաչ Սեչինյանի ծննդյան **115-**ամյակը

Հ. Սեչինյանի շիրիմին հոգևոր հովիվ Արարատ քահանա Գումբալյանը կատարեց հոգեհանգստյան
կարգ
:

Նույն օրը Աջարիայի Խ. Ախվլեդիանիի անվան պետական թանգարանում տեղի ունեցավ
Հ
.
Սեչինյանի
նկարների
անհատական
ցուցահանդեսի
բացումը
:
Ներկայացվեցին
շուրջ
50
նկարներ
:
Այստեղ
Երևանի
պետական
երաժշտանոցի
Գյումրիի
մասնաճյուղի
ուսանողուհի
Գայանե
Մշեցյանը
կատարեց
գործեր
Հ
.
Սեչինյանի
երաժշտացանկից
:
Ողջույնի
խոսքով
հանդես
եկան
Աջարիայում
ՀՀ
հյուպատոս

3 / 4

Հրաչ Սեչինյանի ծննդյան **115-**ամյակը

Գարիկ Իսրաելյանը, Տեր Արարատ քահանա Գումբալյանը, համայնքի ղեկավարները, քաղաքապետարանի ներկայացուցիչները, թանգարանի ղեկավարությունը, արվեստագետներ: Թանգարանում տեղի ունեցավ նաև Հ. Սեչինյանի հիշատակին նվիրված Գուլո Փութկարաձե - Սեչինյանի «Ծննդից մինչև մահ» գրքի շնորհանդեսը:

4 / 4